

## ՀԱԽԱՏԵԱԼԻՆ ՎԱՐՁՔԸ

Անկասկած, որ դժուար է այս դարուս մանաւանդ այս երկրին մեջ, հաւատք ունենալ եւ գործել: Սակայն խնդրողին պիտի տրուի (*Մո. 7.7*):

Եթէ մենք առանց երկմտելու աղօթենք Սատուծոյ եւ խնդրենք, որ մեզ զօրացնէ մեր հաւատքին մեջ, Սատուած պիտի լսէ մեր աղօթքը:

Եւ այս բոլորին փոխարէն, սիրելի հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ, Սատուած առատօրէն պիտի վարձատրէ մեզ:

Նոր կտակարանին մեջ յանախ Արքահամի անունը յիշուած է իբր օրինակ զօրաւոր հաւատքի:

Յակորոս առաքեալի Ընդհանրական նամակին մեջ կը կարդանք. «Արքահամ Սատուծոյ հաւատաց, ու այն իրեն արդարութիւն սեպուեցաւ եւ ինք Սատուծոյ բարեկամ կոչուեցաւ» (*Յակ. Հնդ. Բ. 23*): Արքահամ Սատուծոյ բարեկամ կոչուեցաւ: Արդեօֆ ասկէ աւելի մեծ վարձատրութիւն կարելի<sup>o</sup> է երեւակայել: Արդեօֆ կա՞ մէկը, որ չի փափաքիր Սատուծոյ բարեկամը ըլլալու շնորհին արժանանալ:

Մենք բոլորս ալ, սիրելի հաւատացեալներ, կընանք Սատուծոյ բարեկամը ըլլալու շնորհին արժանանալ, եթէ հաւատք ունենանք եւ մեր գործերով զօրացնենք մեր հաւատքը՝ ինչպէս ըրաւ Արքահամ:

Աղօթենք առ բարձրեալն Աստուած, որ Սուրբ հոգիով լիցնէ մեզ, որպէսզի զօրանանք մեր հաւատքին մեջ եւ մեր գործերով կենդանի պահենք մեր հաւատքը, որպէսզի կարենանք Սատուծոյ բարեկամը ըլլալու շնորհին արժանանալ:

## ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

### ԼՈՒՍԱՐԱՐ

Ա.որեայի ընթացքին եկեղեցական զանազան սպասներու մաքրութեամբ զբաղող եւ յատկապէս եկեղեցական արարողութեանց անմիջական դասաւորումները կատարող եւ իր կարեւոր ներդրումը բերող անձն է լուսարարը:

Լուսարարին հիմնական պարտականութիւնն է ամէն առաւօտ կանոնական մուտքելու անուն և լիցնել եւ պատրոյզները փոխել, Ս. Սեղանին Ս.տենի գրակալին երկու կողմերը դրուած աշտանակներուն մուտքերը փոխել, Աւետարանի ընթերցումէն առաջ գրակալը դնել, Աւետարան կարդացող եկեղեցականին շուրջառ տալ, եպիսկոպոսներու ներկայութեան փոքր գորգը անոնց ոտքերուն տակ փոխել, Մկրտարանը ամէն մկրտութենէն ետք մաքրել, Զախարովան աւանդատան մեջ կրակը միշտ խնկանցին մեջ պատրաստ պահել, շուրջառներն ու փիլոնները լաւագոյնս ծալուած եւ դասաւորուած պահել եւ դեռ բազմապիս նմանօրինակ այլ պարտականութիւններ, որոնք կը կատարուին լուսարարին կողմէ, ներդաշնակելով եկեղեցւոյ արարողութեանց հեղասակ ընթացքը:

Լուսարարին դերը շատ կարեւոր է եկեղեցական մեր կեանքին մեջ, յատկապէս լուր օրերուն, երբ դպիրներու բացակայութիւնը զգալի կ'ըլլայ ինքնէ, որ սարմուներն ու քարոզները կը կարդայ, բուրգան կ'ընէ եւ կը մատուցէ իր անմիջական ծառայութիւնը արարողութեանց ընթացքին :

Լուսարարներ պարտին, նաեւ...  
Շարունակելի

### ՀԱՍՑԵ

ՃՐԱՎԱԾՄԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,

P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300 - [facebook-h-էջ-յերազ-թերթ](http://facebook-h-էջ-յերազ-թերթ)

## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՁՈՒ ԽՈՎԵԴ ԻՆ ՈՅԵԵՐՈՒՄ ՃՐԱՎ Է ՈՒ Խ ԸՆԴԻՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ  
(Ա. 119.105)

ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 12 ՍԵՊԵՏԵՄԲՐԻ 2021

ԹԻՒ 37

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 49. 13-23: Գդ. 6. 14-18:

ՅԻՍՈՒԽ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՆԴԻՆԵՐԸ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 3.13-21

### ՏՕՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՄՐԲՈՅ ԽԱԶԻՆ

ՅԻՍՈՒԽ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՆԴԻՆԵՐԸ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 3.13-21

Ոչ ոք երկինք ելաւ բացի մարդու Որդին, որ իջաւ երկինքէն, ուր կը գտնուիր: Եւ ինչպէս, որ Սովու պղնձեայ օձը բարձրացուց անապատին մեջ, նոյնպէս ալ պէտք է Մարդու Որդին բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յափուենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ՝ յափուենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց, ոչ թէ որպէսզի Որդին աշխարհը դատապարտէ, այլ՝ որպէսզի աշխարհը փրկէ: Ով, որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտոիր, իսկ ով, որ չի հաւատար անոր, արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդին չհաւատալուն համար:

Եւ դատապարտուինը այս է: Հակառակ անոր, որ լոյսը աշխարհ եկաւ, մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ շարութիւն կը գործէին: Ով, որ չար գործ կը կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով, որ կը կատարէ ինչ, որ ճշմարիտ է, լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ, թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են:

### Կրնա՞ ժեկի բայսապրեկ հայկական խաչի չեմին մասին

Այս: Հայկական Խաչը միշտ դատարկ կը ներկայացուի եւ անոր վրայ չեմի հանդիպիր խաչուած Քրիստոսին: Ինչո՞ւ: Որովհետեւ այդպիսով մարդիկ ուզած են խորհրդանշել Քրիստոսի յաղթանակը մահուած առջեւ:

Հայկական խաչերը, երբեմն կը ներկայացուին զարդարուած, խաղաղ, տերեւներով եւ ցորենի հասկերով: Ասոնք կը խորհրդանշեն կեանքը, որ ծնունդ կ'առնէ խաչէն, որ այլապէս մահուած ծառայող գործիք մըն էր:

# ՍՈՒՐԱԲԵՐ ԵՒ ՏՈՒԵՐ

## ՏԵՐԱՎՄԱՆ ՄԹԲՈՅ



Ամէն տարի, Սեպտեմբեր 11-ի եւ  
17-ի միջեւ զուգադիպող Կիրակի օրը,  
Հայաստանեայց Եկեղեցին կը յիշատա-  
կէ իր հինգ տաղաւարներէն մէկը՝ Խաչ-  
վերացը։ Ինչպէս անունը կը պարզէ  
Խաչվերացը հայ ժողովուրդին սիրելի  
խորհրդանիշ դարձած խաչին նուիր-  
ւած տօներէն մէկն է։

Խաչի նուիրուած Խաչվերացի տօնը  
Խաչը փառաբանելու, Խաչը հպարտու-  
թեամբ վեր բարձրացնելու տօն մըն է:  
Այս տօնը հիմնուած է պատմական  
յստակ եղելութեան մը վրայ, որ տեղի  
ունեցած է Քրիստոնէութեան սկիզբի  
տարիներուն: Պատուական դրուագը  
հետեւեալն է.—Պարսիկները Երուսաղէ-  
մը աւերելէ ետք կը փախցնեն Քրիս-  
տոսի խաչը: Հերակլ կայսրը իր կար-  
գին կ'արշաւէ Պարսկաստան եւ կը վե-  
րատիրանայ սուրբ խաչին: Զայն վեր-  
ցընելով՝ կը վերադառնայ Կ. Պոլիս եւ  
ժողովուրդին առջեւ հպարտութեամբ  
բարձրացնելով՝ մուտք կը գործէ քաղաք:

Խաչը վեր առնելու այս առաջին  
եղելուրիւնը կը վերագրուի Երուսա-  
լէմի առաջին եպիսկոպոս Յակոբ Ա-  
ռաքեալին, որ խաչը վեր առնելով՝ օրհ-  
նեց ժողովուրդը անոր ըստելով. «Խաչի  
բն, Քրիստոս, երկիրպագանեմք», այ-  
սինքն՝ «Քրիստոս, Խաչիդ առջեւ կը  
ծնրադրեն ու կ'երկրպագենք»:

Խաչվերացի օրը Հայաստանեայց  
եկեղեցին ներս կը կատարուի բափօր  
եւ Անդաստան, որուն ընթացքին օրհ-  
նութիւն եւ փառք կը տրուի Աստուծոյ  
իր տուած բարիքներուն եւ առատաձեռ-  
նութեան համար եւ յատուկ աղօթ-  
ներով կ'օրինուին աշխարհի չորս ծա-  
գերը:

Աւանդութիւն է կիրանանի թեմէն Անք Կիրակին երեկոյեան յատուկ հանդիսութեամբ կատարել Թափօր, Անդաստան եւ երեկոյեան ժամերգութիւն Ս.Քառասնիկ Մանականա եկեղեցու մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ-  
ները այսօր երեկոյեան ժամը 5:00-ին  
Ներկայ գտնուելու յատուկ թափօրի  
արարողութեան, որ պիտի կատարուի  
Ս. Քառասնից Մանականց Եկեղեցւոյ  
մէ:

ԱՊՕԹՔ ԽԱԶԻ  
ԱՊԱՒԻՆՈՒԹԵԱՆ

Քու Խաչդ մեզի թռղ ապաւէն ըլլայ,  
թ Յիսուս, երբ որ երեւաս Հօր փառ-  
վ՝ լուսաւոր ամպերու մէջ: Այն ժա-  
նակ, մենք չենք ամշնար՝ թե՛զ հաւա-  
ցողներս, այլ Քու մեծ զօրութեամբ  
ուրախանանք, Քու ազ կողմդ, իբրեւ  
ևսոյ որդիներ, իբրեւ զերեկուայ  
ոդիներ: Ամէն:

Հ ԱԳԵՒՈՐ  
ՊԱՏ ԳԱՍ

# ԱՍՏՈՒՎԾ Է ՀԻՒՎԵՐՆԵՐԸ ԲԺՇԿՈՂԸ

Երկու հաստատումներ եւս:

- 1) Երբ Յիսուս երկրորդ անգամ  
ալով դպաւ կոյրին աչքերուն, ան  
սաւ ամէն ինչ յստակ տեսնել:  
ատելի է սակայն, որ առաջին  
գամ Յիսուս թուրով թրծեց անոր  
քերը եւ ապա ձեռքով դպաւ  
քերուն, իսկ երկրորդ անգամ,  
որ չգործածեց, այլ՝ պարզապես  
ոքերը դրաւ աչքերուն վրայ,  
ովկեցնելու համար իրեն եւ մեզի,  
թուրք չէր, որ զինք բուժեց, այլ՝  
ձեռքին բժշկարար հպումը:

- 2) Երբ Յիսուս տեսաւ, որ կոյրին աչքերը առաջին հպումով չբացուեցան, երկրորդ անգամ դարձեալ դպաւ աչքերուն, որպէսզի յիշեցնէ մեզի, թէ երբ ինք գործ մը սկսի, զայն իր աւարտին կը հասցնէ յաջողութեամբ, եւ կը սորվեցնէ մեզի նոյնը ընել:

## ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻ Ի՞Ք Հ ԱԳԵԽՈՐ ԴԱՍԸ

- 1) Ինչպէս Յիսուս թուք գործածեց բայց բուժումը իրմէ էր, այնպէս ալ բժիշկները դեղ կը գործածեն, բայց բուժումը Աստուած է որ կու տայ:

- 2) Երբ գործի մը ձեռնարկենք եւ շուտով արդիւնք չքաղենք կամ արգելքներու հանդիպինք՝ չյուսահատինք, այլ՝ յարատեւենք գործի մէջ:

ԵԹԵԿԱՄԵՐԲԿ'ՈՒԶԵՍ...

ԱԴՈԹՁ Ս. ՀԱՐՈՒԴՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼԵ ԵՏԸ

Դուն, որ մեր տկար բնութեան փոր-  
ձառութիւնը ունեցար, ո՞վ մեր Քա-  
հանայապետ՝ Յիսուս, քեզի կը նա-  
յինք: Դուն, որ մեզի համար մեղքի  
պատարագ եղար, որպէսզի մենք քեզի  
համար արդար ըլլանք: Դուն, որ մեզի  
համար երկրաւոր եղար, որպէսզի մենք քեզի  
համար երկնաւոր ըլլանք: Դուն,  
որ մեզի համար Հաց եղար, որպէսզի  
մենք քեզ նաշակելով սրբուինք: Տուր  
վիշտերով լեցուն քու Մարմինդ, որ-  
պէսզի բոլոր սիրտերը քեզ նաշակեն եւ  
սրբուին: Մատոնուակէ՛ վտակի պէս  
կաթկրող քու անմեղ Արիւնդ, որպէսզի  
մարդիկ անմեղութեամբ յագենան: Եր-  
կարէ՛ փրկական խաչդ՝ այս աշխարհի  
ծովուն մէջ լողացողներուս, մեզ վեր՝  
դէաի քեզ բարձրացնելու համար:

Ծնորհի՛ կարօտ ենք, սփռէ՛, յոգ-  
նած ենք մեղանչելէ, բաւէ՛. խաւարի մէջ  
կը խարխափինք, նառագայթէ՛. մեր  
հաւատքէն տապալած ենք, հաստատէ՛:  
Դո՞ւն ես յոյսը, դո՞ւն ես լոյսը, դո՞ւն ես  
կեանքը, դո՞ւն ես բաւութիւնը, դուն  
ինքդ ես անմահութիւնը: Քեզի՛ կը  
սպասենք, քու շնորհիդ կորնածներս.  
Քեզմէ՛ փրկութիւն ստանալու կարօտ  
ենք, քու Մարմինիդ միացածներս: Քե՛զ  
իբրև բաւիչ Քահանայ ունինք, մենք  
քու Արիւնովդ գնուած հօտդ: Նայէ՛  
բոլորիս, սփռի՛ մեր տարակուսանք-  
ները քու փրկագործութեամբդ, հան-  
դարտեցո՞ւր մեր խոռովութիւնները քու  
խաղաղութեամբդ, հանգաստացո՞ւր  
մեր յոգնած հոգիները քու օթեւան-  
ներուդ մէջ, ուր դուն գացիր, ո՞վ Տէր,  
Եւ նոյնը մեզի խոստացար: Եւ արժա-  
նացո՞ւր մեզ՝ քեզի պատկանողներս, որ  
փառաւորենք քեզ, Հօրը Եւ Սուրբ  
Հոգիին հետ միասին՝ յաւիտեանս:  
Ամէն:

Ա. ՆԵՐՍԵՍ ՂԱՄԲՐՈՆԱՑԻ